նել զբռնութիւնս այլազգեաց, զի մի յանդգնեսցին ընդդէմ օրինաց և կայսերական հրամանին, յելս Շէվվալ ամսոյ՝ ՌՌԵ (1695)։

Ի հասանել հրովարտակիս՝ թէպէտ և ընթերցաւ յականջս այլազգեաց Երուսաղէմի, այլ ոչ ինչ ազդեաց 'ի լսելիս նոցա, եւ դարձեալ սկսան նեղել զմիաբանս Հայոց՝ քաղաքապետն և գործավարք տէրութեան վասն նորոգութեան Ս. Փրկչի վանաց, ոչ ինչ համարելով զբրեանս դատարանի և զհրովարտակսն. և բռնացեալ 'ի վերայ նոցա, պահանջէին զգումարս դրամոց։ Զանձրացեալ միաբանաց 'ի կեղեքանաց աստի, վերստին բողոք բարձին 'ի Դուռն, և աղաչեցին բառնալ զնեղութիւնս այլազգեաց։ Դարձեալ գրեցաւ հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի՝ արդարութեամբ կատարել զգործն, զի եթէ ըստ հրամանի դատաւորաց չինեալ և բարձրացուցեալ իցեն զպարիսպ վանաց, և չգուցէ վնաս ինչ ունիք, գնալ ըստ զօրութեան վճռոյ դատարանի, արգելուլ զմեծամեծս եւ զայլս դաւառին չպահանջել բռնութեամբ զինչս, և զանհնազանդսն ծանուցանել 'ի Դուռն։ Սակայն և 'ի վերայ այսր ամենայնի՝ չեւ եւս բովանդակեալ շրջան տարւոյն, լուեալ գործակալաց և բռնաւորաց դաւառին՝ թէ նորոգեալ են Հայք զվանս Ս. Փրկչի, դիմեցին 'ի վերայ նոցա, նեղութեամբ և տագնապաւ խնդրէին բաղում ինչ վասն չինուածոյն, զի փոխեալ էք ասէին զառաջին հանգամանս նորին, և անցեալ քան զչափ սահմանի, և այլ սոցին նման բանք։ Անճարացեալ միաբանաց դիմեցին առ դատաւոր քաղաքին, եւ հաճեալ զկամս նորա աղերս արկին գրել զայս ամենայն տառապանս եւ հասուցանել յունկն Արքայի, թէ որպէս աւաղակք յառաջագոյն մտեալ 'ի վանս կողոպտեցին զայն և սպանին զմիաբանսն, որ յամենայն տեղիս հռչակեցաւ, և չէ հնար թագչիլ, և չինեցաւ պարիսպն Արքունի հրամանաւ։ Իսկ այժմ յարուցեալ սոցա 'ի վերայ մեր, կեղեն և տառապեն զկեանս մեր, զի չունիմք զայլ ինչ հատուցանել սոցա։

Իսկ դատաւորն զիջեալ յաղաչանս նոցա՝ գրեալ ծանոյց 'ի Դուռն, զոր միանգամ ծանուցին նմա միաբանք Հայոց, և խնդրեաց հրովարտակաւ Արքայի դադարեցուցանել ըզ-